ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վարդանյան Ն.Տ. (ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)

vardanyannune@yandex.ru

Հոդվածը նվիրված է գենդերային նույնականության զարգացման դիտարկմանը և վերլուծությանը: Հատուկ ուշադրություն են արժանանում մասկուլին, ֆեմինին և անդրոգին գենդերային նույնականության տեսակների հասկացությունները և դրանց սահմանումը տարբեր հոգեբանական տեսություններում:

Հանգուցային բառեր՝ *գենդեր, գենդերային նույնականություն, մասկուլինություն, ֆեմինինություն, անդրոգինություն:*

Գենդերային դերերի փոփոխման հետ կապված այսօր հասարակության մեջ տեղի են ունենում արմատական փոփոխություններ գենդերային նույնականության ոլորտում, ինչպես նաև փոխվում են արժեքները, նպատակները և սպասելիքները, որոնք ունեն տղամարդիկ և կանայք: Այս կապակցությամբ կարևոր է իմանալ գենդերային նույնականություն հասկացության ձևավորման նախադրյալները և առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակն է վերլուծել գենդերային նույնականություն հասկացության պատմական ձևավորումը և զարգացման միտումները:

Հոդվածի խնդիրներն են՝

Դիտարկել գենդերային նույնականության վերլուծությունը տարբեր հոգեբանական հայեցակարգերի շրջանակներում:

Վերլուծել մասկուլինությունը, ֆեմինինությունը և ադրոգինությունը՝ որպես գենդերային նույնականության տեսակներ:

Գենդերային նույնականությունը հիմնվում է, մի կողմից, մարմնական նշանների վրա, իսկ մյուս կողմից՝ վարքային առանձնահատկությունների վրա, որոնք գնահատվում են ըստ մասկուլինության կամ ֆեմինինության կարծրատիպին համապատասխանությանը կամ անհամապատասխանությանը: Ընդ որում, ինչպես և բոլոր այլ ինքնագնահատականները, այն մեծամասամբ կախված է շրջապատի կողմից երեխային տված գնահատականից:

Արդեն սկսած Զ. Ֆրոյդի կողմից առաջ քաշած տեսության ժամանակներից սեռական նույնականության գենդերային օրինակները համարվում էին անփոփոխ անձնային գծեր, որոնք ունեն հոգեֆիզիոլոգիական ծագում [5]: Նույնականության տեսությունը, որը ծագում է հոգեվերլուծությունից, ընդգծում է հույզերի և կրկնօրինակման դերը՝ համարելով, որ երեխան անգիտակցորեն կրկնօրինակում է իր սեռի ներկայացուցիչների վարքը,

առաջնահերթ խոսքը գնում է ծնողների մասին, որոնց տեղն ինքն ուզում է զբաղեցնել [8,9]:

XX դարի 30-ական թվականներին ստեղծվեց սեռական տարբերությունների մշակութային պայմանավորվածության հայեցակարգը, որը ժխտեց նախորդող պատկերացումները [4] և շեշտեց, որ տղամարդկանց և կանանց առանձնացնում են հասարակական տարբերությունները և վարքի ոճերը, որոնք ունեն հասարակական բնույթ: Հենց այս գործոններն են այսուհետ հանդես գալիս որպես մասկուլինության կամ ֆեմինինության որոշիչ բաղադրիչներ: 70-ական թվականների կեսերին հետազոտողներից շատերը շեշտեցին այն փաստը, որ կարծիքն այն մասին, որ մասկուլինությունը և ֆեմինինությունը անձի կենտրոնական գծերն են, թյուր է և անհիմն: Այդ ժամանակ կուտակվել էր մասկուլինության և ֆեմինինության բովանդակային բնութագրերի բազմություն, որոնք տարբեր էին տարբեր մշակույթներում և տարբեր ժամանակահատվածներում: Այդ պատճառով ավելի խրթին էր դառնում տվյալ բնութագրերի թեստային չափման համար վալիդ միջոցների ստեղծումը: Տվյալ հիմունքի վրա կատարվեց մասկուլինություն և ֆեմինինություն հասկացությունների վերանայում և դրանց ներքո սկսեցին հասկանալ ոչ թե անձնային որակներ, այլ սեռադերային վարք, որը թելադրվում է մշակույթի կողմից և որը հնարավոր է հետազոտել ըստ որոշակի անձի մոտ դրանց արտահայտվածության աստիճանի:

Տվյալ ենթադրությանը հետևեցին հետազոտություններ, որոնք բացահայտեցին, որ մասկուլինացման և ֆեմինինացման գործընթացները տեղի են ունենում զուգահեռ և հանդես են գալիս որպես երկու բացառապես տարբեր բևեռներ:

Որպես նույնականության տեսակներ՝ մասկուլինությունը և ֆեմինինությունը արտահայտվում են անձի արժեքային կողմնորոշումների, ուղղվածության, սեռային դերերին վերաբերմունքի, հոգեբանական հարաբերությունների տեսքով: Ընդհանրացնելով կարելի է նշել, որ մասկուլինությունը և ֆեմինինությունը իրենցից ներկայացնում են ներքին և արտաքին բնութագրերի միասնություն, որոնք փոփոխական են տարածության և ժամանակի մեջ և գտնվում են հասարակության և որոշակի դարաշրջանի աշխարհայացքի ազդեցության տակ:

Գոյություն ունեն մասկուլինության և ֆեմինինության ուսումնասիրությանը տարբեր մոտեցումներ՝ ինչպիսիք են կենսաէվոլյուցիոն, հոգեդինամիկ, հասարակական-կառուցողական և հետմոդերնիստական: Մանրամասնորեն չանդրադառնալով տվյալ մոտեցումներին՝ նշենք, որ կենսաէվոլյուցիոն մոտեցումը գենդերային նույնականության դիտարկման պարագայում որպես հիմք է վերցնում գենդերային վարքի կենսաբանական բաղադրիչը և գենետիկական կանխորոշվածությունը: Մասկուլին և ֆեմինին կերպարների միջև տարբերությունները հանդես են գալիս որպես անհատի կենսաբանորեն պայմանավոր-

ված առանձնահատկություններ: Հետևաբար՝ մասկուլինության հիմք է համարվում ագրեսիվությունը, իշխելու ձգտումը և դեպի դուրս ուղղված գործունեությանը հակումը, իսկ ֆեմինինության հիմք՝ սերնդի շարունակման բնազդը, պասիվությունը և ուրիշների մասին հոգ տանելը: Գենդերային տարբերությունները տվյալ մոտեցման մեջ բացատրվում են հետևյալ հայեցակարգերի տեսանկյունից՝ Վ. Գեոդոկյանի՝ էվոլյուցիոն ֆունկցիոնալ տարբերությունների հայեցակարգ [2], էնդոկրին տարբերությունների հայեցակարգ, վերարտադրող հետաքրքրությունների բախման հայեցակարգ, կենսաբանական և հասարակական գործոնների փոխներգործության ընթացքում սեռական զարգացման առանձնահատկությունների հայեցակարգ:

Հոգեդինամիկ մոտեցման շրջանակներում նշվում է, որ կենսաբանական առանձնահատկություններն արդիականանում են անձի անհատական զարգացման գործընթացում՝ հասարակական հարաբերությունների և նորմերի ազդեցության տակ, որոնք պետք է համապատասխանեն սեռերի կենսաբանական էությանը: Տվյալ հայեցակարգի կողմնակիցները համարում են, որ մասկուլինությունը և ֆեմինինությունը հոգեբանական մակարդակի վրա ձևավորվում են նույնականացման մեխանիզմի հիման վրա: Հոգեդինամիկ մոտեցման շրջանակներում հիմնականում վերլուծության է ենթարկվում մասկուլինությունը և դրա առանձնահատկությունները, և անտեսվում է ֆեմինինության ֆենոմենը, որը ներկայացվում է ֆեմինիստական հոգեվերլուծական տեսությունների կողմից [6, 7]:

Մասկուլինության և ֆեմինինության վերլուծությանը հետմոդերնիստական մոտեցման շրջանակներում տվյալ հասկացությունները դիտարկվում են ոչ թե որպես արդյունք, այլ որպես գործընթաց: Հետևաբար, մասկուլինությունը և ֆեմինինությունը՝ ոչ թե որոշակի գծերի հավաքածու է, այլ սուբյեկտների փոխներգործության բնութագիր: Մասկուլինությունը և ֆեմինինությունը ենթադրում են գործունեություն, որն ենթարկվում է գենդերային գնահատականի և ոչ թե պարզապես հասարակական սպասելիքների արդյունք է: Գոյություն ունի կարծիք, համաձայն որի նույնականության ՞նորմալ՞ ձևավորման ձգտումն ավելի բնորոշ է ինդիվիդուալիստական տղամարդկային բնույթին, քան կանանց, որոնք հիմնականում կողմնորոշված են դեպի ՞կապերի ստեղծում՞ [3, էջ 177]:

1974 թ.-ին Ս. Բեմը ձևակերպել է տարբեր գենդերային նույնականություն ունեցող մարդկանց երեք տիպերի գոյության մասին հայեցակարգը: Տվյալ տիպերին պատկանում են ֆեմինին բնութագրերի գերակշռությամբ, մասկուլին բնութագրերի գերակշռությամբ և անդրոգին բնութագրերի գերակշռությամբ մարդիկ: Ըստ Ս. Բեմի անդրոգին տիպին բնորոշ է մասկուլին և ֆեմինին բնութագրերի ներդաշնակ հավասարակշռություն: Ընդորում, Ս. Բեմը համարում էր, որ հենց երրորդ տիպն է առավել գրավիչ: Նա համարում էր, որ անդրոգին անձնավորություններն առավել հարմարվող են և ճկուն,

տարբերվում են ստեղծագործ ունակություններով և հոգեբանորեն ներդաշնակ են: Մասկուլին և անդրոգին տիպերը նկարագրվում էին Ս. Բեմի կողմից, որպես սահմանափակ և իրենց վարքում հասարակության մեջ գերակշռող գենդերային կարծրատիպեր ցուցադրող [1]: Անդրոգինության գաղափարը սկսեց օգտագործվել հոգեբանության տարբեր ոլորտներում: Հետագայում Ս. Բեմը հրաժարվեց անդրոգինության գաղափարից՝ բացատրելով դա նրանով, որ ՞տղամարդկային-կանացի՞ հստակ տարանջատմամբ հասարակության մեջ դաստիարակելով երեխաներին անորոշ անդրոգինության ոճի մեջ, հնարավոր է նրանց դժվար վիճակի մեջ դնել: Չնայած դրա, վերջին տարիներին տեղի ունեցան հասարակական կյանքի և գենդերային պատկերացումների մեծ փոփոխություններ, ինչի հիման վրա կարելի է եզրակացնել, որ տղամարդկայինի և կանացիի խիստ բաժանումը այլևս այդքան էլ արդիական չէ: Կարելի է ասել, որ ֆեմինին և մասկուլին որակների համադրությունը կրկին դարձել է առավել բարենպաստ տարբերակ թե կանանց, թե տղամարդկանց համար:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ գենդերային դերերը և դրանց ազդեցությունն անձի վրա սահմանում են գենդերային նույնականության կայացումը: Գենդերային նույնականությունն երթադրում է նույնականացումը որոշ սեռի հետ, ինքնաընկալումը տվյալ սեռի ներկայացուցչի դերում: Դա ենթադրում է որոշակի վարքի նորմեր և անձնային որակներ, որոնք պետք է ընկալվեն: Գենդերային նույնականության հիման վրա ձևավորվում է նաև անձնային նույնականությունը և ամբողջական ինքնաընկալումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գենդերային նույնականություն հասկացությունը ներառում է իր մեջ կենսաբանական և հասարակական գործոնների համադրություն և արտահայտվում է անձի կենսագործունեության տարբեր ոլորտներում: Փոխկապակցված լինելով հասարակության նորմերի և պահանջների հետ՝ գենդերային նույնականությունը ենթարկվում է վերափոխման: Այս առումով, առավել արդիական է դառնում գենդերային նույնականության ձևափոխման գործընթացի վերլուծությունը ժամանակակից իրականության փոփոխվող պայմաններում:

Գրականություն

1. **Бендас Т.В.** Гендерная психология: Учебное пособие. – СПб.: Питер, 2006. – 431 с.
2. **Геодакян В.А.** Теория дифференциации полов в проблемах человека // Человек в системе наук. – М.: Наука, 1989. – с. 171–189.
3. **Майерс Д.** Психология. – Минск: «Попурри», 2008. – 848 с.
4. **Мид М**. Культура и мир детства: Избр. произв. – М.: Наука, 1988. – 429 с.
5. **Фрейд З.** Психология бессознательного: Сб. Произведений // Сост., науч. ред. М.Г. Ярошевский – М.: Просвещение, 1990. – 448 с.
6. **Хорни К.** Психология женщины. Самоанализ. – СПб.: Питер, 2012. – 320 с.

7. **Чодороу Н.** Воспроизводство материнства: Психоанализ и социологиян гендера. – М.: “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2006. – 496 с.
8. **Maccoby E.E. & JacklinC.N**. The psychology of sex differences. – London: Stanford University Press/Oxford University Press, 1975. - P. 634.
9. **Mischel W. A** social-learning view of sex differences in behavior. In: Maccoby, ed. The Development of Sex Differences. - Stanford, CA: Stanford University Press, 1966. - P. 56-81.

РАССМОТРЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ ГЕНДЕРНОЙ ИДЕНТИЧНОСТИ

Варданян Н.Т. (ЕГМУ, Ереван, РА)

Статья посвящена рассмотрению и анализу развития гендерной идентичности. Особое вимание уделяется нами понятиям маскулинного, фемининнного и андрогинного типов гендерной идентичности и их определениям в рамках различных психологических теорий.

***Ключевые слова**: гендер, гендерная идентичность, макулинность, фемининность, андрогиния.*

THE OVERVIEW OF PSYCHOLOGICAL PECULIARITIES OF GENDER IDENTITY

Vardanyan N.T. (YSMU, Yerevan, RA)

The article is dedicated to the review and analysis of gender identity development. We specifically focus on the concepts of masculine, feminine and androgyny types of gender identity and their definitions within different psychological theories.

***Key words:** gender, gender identity, masculinity, femininity, androgyny.*